

Ուլքեր կարող են օգտվել նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական ծառայություններից անվճար

1. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման իրավունքից օգտվում են հետևյալ խմբերում ընդգրկված անձինք՝

1) ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 30.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուները,

2) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները և նրանց հավասարեցված անձինք,

3) ծերանոցներում և անօթևանների ժամանակավոր կացարաններում խնամվող անձինք,

4) բռնադատվածները,

5) Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցները,

6) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձինք,

7) ձերբակալվածներ, կալանավորված անձինք և ազատազրկման դատապարտվածներ,

8) մինչև 18 տարեկան երեխաներ,

9) 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք,

10) 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք,

11) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների ընտանիքների անդամներ,

12) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներ և նրանց ընտանիքների անդամներ,

13) երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ,

14) ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ,

15) զինծառայողներ և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամներ, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողներ,

16) սոցիալական փաթեթի շահառուներ:

2. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման իրավունքից օգտվելու իրավունք ունեցող խմբերում ընդգրկված անձինք պետության կողմից

երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվում են նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ հետևյալ բժշկական ծառայությունները՝

1) գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում (ներառյալ միկրոկաթետերի, միկրոպարոյրի և օնիքսի արժեքը),

2) կլիպսների օգտագործումը՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ,

3) շունտավորող համակարգերի օգտագործումը՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ,

4) էնդովասկուլյար ռեկոնստրուկտիվ բուժում՝ նյարդավիրաբուժական հիվանդությունների ժամանակ,

5) սրտի բաց վիրահատություն, կորոնար անոթների բալոնային դիլատացիա, կորոնար անոթների ստենտավորում՝ ինչպես դեղապատ, այնպես էլ՝ ոչ դեղապատ ստենտերով, սրտի փականների պրոթեզավորում, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիա,

6) աորտայի անևրիզմաների պատվածքների և (կամ) շերտազատումների վիրահատություններ,

7) կարդիովերտեր-դեֆիբրիլատորի իմպլանտացիա. 8) սրտի կաթետերային արևացիա,

9) խոշոր և պերիֆերիկ անոթների բալոնային դիլատացիա և ստենտավորում,

10) սիներակի (Վ. Կավա/V. Cava) ֆիլտրի տեղադրումը (ներառյալ ֆիլտրի արժեքը),

11) արթրոսկոպիկ վիրահատություններ,

12) բացառապես վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների, ընդ որում, միայն հարթակների, պտուտակների և շյուղերի արժեքները,

13) շագանակագեղձի միջմիզուկային մասնահատում (ՏՈՒՌ, ТУР)՝ բիպոլյար կամ լազերային եղանակով,

14) քարափշրում (լիթոտրիպսիա)՝ հեռահար, պերկուտան, ուրեթերոռենոսկոպիկ,

15) սկլերոպլաստիկա, կեռատոպլաստիկա,

16) աչքի առաջային խցիկի արհեստական փականների կիրառում (շունտավորում):

3. ՀՀ կառավարության 2014 թվականի թիվ 375-Ն որոշման N 2-րդ հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող որոշ բժշկական ծառայություններ հասանելի են նաև սոցիալական փաթեթի շահառուներին: